ՏՐԱՆՍ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոկտեմբեր, Նոյեմբեր, Դեկտեմբեր 2019



Հ-11

TGEU
tgeu.org

ՀԱՆՐԱՅԻՆ ԿՈՉ՝ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ----------2
«ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԵՏՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ՔՀԿ ՀԱՄԱԺՈՂՈՎ----------3
ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ----------6
ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՆՈՒՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ և ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ----------8
ՀԱՐՁԱԿՈՒՄ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿՆՈՋ ՎՐԱ ՏԱՇԻՐ ՊԻՏՑՑԱՅՈՒՄ----------9
ԱՎԱԳԱՆՈՒ ՆԱԽԿԻՆ ԱՆԴԱՄԸ ԽՆԿԱՐԿԵԼ Է ԱԺ ԱՄԲԻՈՆԸ ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԻՑ ՀԵՏՈ----------10
ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ՏՐԱՆՍ ՃԱՄԲԱՐ» 4-Ը----------11
ԹԱՐՄԱՑՈՒՄ ՆԱՐԵԿ ՄԱԼՅԱՆԻ ԴԵՄ ԳՈՐԾԻ ԵՐԱԲԵՐՅԱԼ----------13
ՏՐԱՆՍ ԿՆՈՋ ՓԱՍՏԱԲԱՆԸ՝ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ----------16

ՀԱՆՐԱՅԻՆ ԿՈՉ՝ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2008-2019 թթ. ամբողջ աշխարհում սպանվել են 3313 տրանսգենդեր անձ, որոնցից 330-ը միայն անցնող տարվա ընթացքում: Ամեն տարի նոյեմբերի 20-ին բազմաթիվ երկրներում տրանսգենդեր համայանքը և աջակիցները միավորվում են հիշելու տրանսֆոբիային զոհ դարձաց անձանց և պահանջելու գենդերային հավասարություն: Չնայած որ Եվրոպական տարածաշրջանի շատ երկրներ շարունակաբար կատարում են բարեփոխումներ տրանսգենդեր անձանց հավասարությունն ապահովելու համար, Հայաստանը դեռ չի իրականացնում իր առջև դրված մի շարք պարտականություններ: Հայաստանում տրանսգենդեր անձինք հանդիսանում են քաղաքական անընդունելի քննարկումների, համակարգային խտրականության և ճնշումների թիրախ, ինչն արտահայտվում է ֆիզիկական և հոգեբանական բռնությամբ և խտրական վերաբերմունքով՝ զբաղվածության, առողջապահության, կրթական և հանրային կյանքի մնացած այլ բնագավառներում:

Հաշվի առնելով պետության՝ խտրականության դեմ պայքարի անարդյունավետ քաղաքականությունը՝ համայնքի անդամների վստահությունը պետական կառույցների նկատմամբ ցածր է: Քաղաքական գործիչների և, որոշ դեպքերում, պետական պաշտոնյաների տրանսֆոբ հայտարարությունները և քաղաքական նախաձեռնությունները խորացնում են ատելությունն ու անհանդուրժողականությունը տրանսգենդեր անձանց նկատմամբ: Հասարակության կողմից ընդունված չլինելը, պետական համակարգի, հատկապես, ոստիկանության անգործությունը տրանսգենդեր անձանց դարձնում են անպաշտպան և անօթևան, իսկ մահվան սպառնալիքներով լեցուն ատելության մթնոլորտը ստիպում է տրանսգենդեր անձանց լքել երկիրը:

«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հիշեցնում է, որ մարդու իրավունքներն ու արժանապատվությունը՝ ըստ ՀՀ Սահմանադրության, հանդիսանում են գերագույն արժեք և, հաշվի առնելով վերոնշյալ խնդիրները, կոչ է անում ՀՀ Կառավարությանը՝

մշակել և կիրառել է ատելության հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետ ռազմավարություն, որը ներառում է օրենսդրական դաշտի բարեփոխումներ՝ ներառյալ ատելության խոսքի և խտրականության դեմ պայքարի համապարփակ օրենսդրության ընդունում,

ապահովել տրանսգենդեր անձանց սեռափոխման իրավունքի իրացումը՝ իրավականորեն այն դաձնելով թափանցիկ և հասկանալի գործընթաց՝ ներառյալ առողջապահական ուղեցույցների մշակում և սեռի իրավական փոփոխության հնարավորություն՝ առանց ստերջացման,

իրավապաշտպանների ապահովությունն ու անվտանգությունը երաշխավորող օրենսդրության մշակում և ընդունում:

«Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ-ն աչալրջորեն շարունակելու է հետևել հասարակական և քաղաքական զարգացումներին և օգտագործելու է ներպետական ու միջազգային իրավապաշտպան բոլոր մեխանիզմները տրանսգենդեր անձանց հավասարության լիարժեք հաստատման համար:

TGEU
tgeu.org

«ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ և ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԵՏՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ՔՀԿ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Նոյեմբերի 20-ից դեկտեմբերի 10-ը «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն Տեղական նախաձեռնությունների կանադական հիմնադրամի (CFLI) ֆինանսական աջակցությամբ իրականացնում էր միջոցառումների շարք «Հավասարության և բազմազանության փառատոն» խորագրի ներքո: Փառատոնի շրջանակներում դեկտմբերի 5-ին՝ մարդու իրավունքների օրվան ընդառաջ, ԻԿՀԿ-ն կազմակերպեց «Գենդերային հավասարության և բազմազանության մարտահրավերները հետհեղափոխական Հայաստանում» թեմայով համաժողով, որին մասնակցում էին ՀՀ-ում դիվանագիտական առաքելություն իրականացնող ներկայացուցիչներ, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում աշխատող տեղական և միջազգային կազմակերպություններ, բազմազանության ու հավասարության ոլորտներում աշխատող այլ ՀԿ-ներ, տրանսգենդեր և ԼԳԲԻՔ համայնքի ներկայացուցիչներ և համախոհներ:

Քննարկումը սկսվեց «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ նախագահ Լիլիթ Մարտիրոսյանի բացման խոսքով: Նա շնորհակալություն հայտնեց բոլոր իրավապաշտպաններին և ակտիվիստներին հավասարության և բազմազանության խթանման դժվարին գործը հպարտորեն իրենց ուսերի վրա կրելու և համաժողովին մասնակցելու համար:

Այնուհետև, ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ-ում դիվանագիտական առաքելություն իրականացնող կառույցների ներկայացուցիչները:

Հայաստանում Արգենտինայի փոխդեսպան Միգել Չիլինգարյանը մասնավորապես նշեց, որ շատ է կարևորում նմանօրինակ հանդիպումները և իր համար մեծ պատիվ է ներկա գտնվել այստեղ, նա իր խոսքում կարևորեց ԻԿՀԿ թիմի կատարած դժվարին աշխատանքը և իր երախտագիտությունը հայտնեց մարդու իրավունքների ոլորտում կատարված ներդրման համար:

Ողջույնի խոսքից հետո հրավիրված խոսնակներն անդրադարձան օրակարգով նախապես ընտրված թեմաներին:

Առաջինը ելույթ ունեցան «Փինք» իրավապաշտպան ՀԿ նախագահ Լիլիթ Ավետիսյանը և փաստաբան Հասմիկ Պետրոսյանը: Նրանք ներկայացնում էին «Ատելության խոսքը և կեղծ լուրերը հետհեղափոխական Հայաստանում» թեմայով զեկույցը: Զեկույցի ներկայացումից հետո տեղի ունեցավ քննարկում համաժողովի մասնակիցների միջև:

Այնուհետև ներկայացվեց «Տարբեր խմբերի կանանց վերարտադրողական առողջության և իրավունքների հիմնախնդիրները Հայաստանում» թեմայով զեկույց, որը պատրաստել էր «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ աշխատակից Անուշ Պողոսյանը:

ԻԿՀԿ իրավաբան, փաստաբան Արթուր Մարգարյանը ներկայացրեց ԻԿՀԿ ռազմավարական դատավարությունների մանրամասները, մասնավորապես տրանսգենդեր տղամարդն ընդդեմ ՀՀ ԱՆ ՔԿԱԳ մարմնի, տրանսգենդեր կանայք ընդդեմ սպորտային ակումբի, Լիլիթ Մարտիրոսյանի ԱԺ ելույթից հետո հնչած սպառնալիքների կապակցությամբ հոգեբանական բռնության փաստով իրավապահ մարմինների անգործության դեմ և այլն: Մասնակիցներն ուղղեցին իրենց հուզող հարցերը, իսկ ԻԿՀԿ փաստաբանը տվեց դրանց բավարարող պատասխանները:

Հաջորդիվ ելույթ ունեցավ «Պատվի պարը» սոցիալ-մշակութային, երիտասարդական ՀԿ գեղարվեստական տնօրեն Արթուր Անդրեասյանը, ով ներկայացրեց «Սոցիալական ձեռնարկատիրությունը և մշակութային միջոցառումների կազմակերպումը հանուն հավասարության և բազմազանության» թեմայով զեկույցը:

Մշակութային թեմայով ևս մեկ զեկույց ներկայացրեց «Բազմազանություն» սոցիալ-մշակութային, մարդասիրական ՀԿ նախագահ Արտակ Առաքելյանը, ով խոսեց «Բազմազանություն» ՀԿ-ի ստեղծման, գործունեության, մշակույթի, հակամշակույթի, ենթամշակույթի վերաբերյալ, և թե ինչպես է հիմնամշակույթը հետապնդում նախանշյալներին:

«Քուիր լաբ» ՀԿ ներկայացուցիչ Արման Արշակ-Շահբազյանը պատմեց «Քուիր լաբ»-ի ստեղծման և բազմազանության ընդունման ոլորտում ծավալած մշակութային գործունեության մասին: Առանձին հարթակ էր տրամադրված մշակութային կազմակերպությունների ստեղծարար աշխատանքի ներկայացման համար, որտեղ «Քուիր լաբ» ՀԿ-ն ներկայացնում էր իրենց հեղինակային պոստերները:

Քննարկման ընթացքում խոսեցին նաև «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ նախագահ Լարա Ահարոնյանը և «Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության» կոալիցիայի նախագահ Հովհաննես Մադոյանը, վերջիններս բարձր գնահատեցին նման հանդիպումների կարևորությունը, արտահայտեցին իրենց երախտիքի խոսքը հրավերքի համար, խոսեցին հետհեղափոխական Հայաստանում մարդու իրավունքների իրավիճակի մասին: Ինչպես նաև խոսք տարամադրվեց «Ֆեմ գրադարանի» հիմնադիր Աննա Նիկողոսյանին, ով պատմեց, թե ինչպես է հիմնվել «ֆեմ գրադարանը», ինչ գործունեություն է այն ծավալում, և թե ինչ խոչնդոտների են նրանք բախվում ամեն օր պայքարելով գենդերային հավասարության և համընդհանուր մարդու իրավունքների համար:

Վերոնշյալ թեմաներին հաջորդեցին մի քանի զեկույց ԻԿՀԿ աշխատակիցների կողմից, որոնցից առաջինը ներկայացրեց «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ ծրագրերի ղեկավար Ա. Գևորգյանը: Վերջինս ներկայացրեց «Տրանսգենդեր անձանց իրավունքների պաշտպանության խնդիրները» թեմայով զեկույցը, որտեղ ներկայացված էր, թե ինչպիսի խնդիրների են բախվում տրանսգենդեր անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող իրավապաշտպանները:

Ինչպես նաև, ԻԿՀԿ հանրային կապերի և հաղորդակցման մասնագետ Էմիլ Ավետիսյանը ներկայացրեց «Տրանսգենդեր անձանց նկատմամբ ատելության խոսքի, վտանգավոր խոսքի և վիրավորանքի մշտադիտարկում» զեկույցը, որը նույնպես ուղեկցվեց բուռն քննարկումներով, հարց ու պատասխանով:

Համաժողովի ավարտին ԻԿՀԿ նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը ներկայացրեց անցնող տարվա ընթացքում «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից բազմազանության և գենդերային հավասարության ոլորտներում իրականացրած ծրագրերը, իրականացման ընթացքում հանդիպած խոչընդոտները, գրանցած հաջողությունները: Այնուհետև Լիլիթ Մարտիրոսյանը շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին և հույս հայտնեց, որ այս դժվարին գործում ներդրվող ջանքերը և ներուժը երբեք չեն պակասի, բոլորին մաղթեց աշխատանքային բարձր տրամադրություն ու սիրով հրավիրեց հաջորդող միջոցառումներին:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն սիրով նվերներ հանձնեց համաժողովի մասնակիցներին գեղներային հավասարության և բազմազանության ոլորտում իրենց կատարած դժվարին աշխատանքների համար:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն ևս մեկ անգամ վերահաստատում է քաղհասարակության ներկայացուցիչների համագործակցության և նմանատիպ հանդիպումների հաճախակի կազմակերպումը և շնորհակալություն է հայտնում բոլոր դիվանագիտական առաքելություն իրականացնող կառույցների ներկայացուցիչներին, մասնակիցներին, խոսնակներին, տրանսգենդեր ու ԼԳԲԻՔ համայնքի ներկայացուցիչներին, ովքեր հատկացրեցին իրենց ժամանակն ու ներկա գտնվեցին համաժողովին:

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի Համընդհանուր պարբերական դիտարկման 3-րդ շրջանում ԼԳԲՏ իրավունքների վերաբերյալ առաջարկությունները Հայաստանին

Ս.թ. դեկտեմբերի 8-ից 12-ը «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ նախագահ Լ. Մարտիրոսյանը և քաղաքականության ու ծրագրերի ղեկավար Ա. Գևորգյանը ԻԿԻՀԿ Խորհրդի որոշմամբ գործուղվել էին Ժնև՝ ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդի (ՄԻԽ) գլխամաս: Գործուղման առաքելությունն էր մասնակցել UPR Info կազմակերպության կողմից իրականացվելիք դասընթացին, ՄԱԿ ՄԻԽ Համընդհանուր պարբերական դիտարկմանը (ՀՊԴ) Հայաստանի 3-րդ շրջանին ընդառաջ կազմակերպվելիք նախահանդիպմանը, ներկայացնել ԼԳԲՏ իրավունքների վերաբերյալ առաջարկություններ ՄԱԿ անդամ պետություններին և իրականացնել լոբբիստական աշխատանքներ ՀՀ-ում ԼԳԲՏ իրավունքների պաշտպանության համար: ՀՊԴ նախահանդիպման նպատակն էր ապահովել քաղաքացիական հասարակության առաջարկությունների ՄԱԿ անդամ պետություններին թիրախային և նպատակաուղղված լինելը:

ԻԿՀԿ ներկայացուցիչները մասնակցեցին ՀՊԴ ջատագովության մեկօրյա դասընթացին, որն իր մեջ ներառում էր համապարփակ տեղեկատվություն ՀՊԴ բոլոր փուլերի, ՄԱԿ անդամ պետությունների հետ լոբբիստական աշխատանքներ կատարելու և ճիշտ, նպատակային ու թիրախային առաջարկներ ներկայացնելու վերաբերյալ:

Դեկտեբերի 10-ին՝ Մարդու իրավունքների միջազգային օրը, ԻԿԻՀԿ նախագահ Լ. Մարտիրոսյանը ՄԱԿ ՄԻԽ գլխամասից հանդես եկավ տեսաուղերձով, կոչ արեց ՀՀ պետական մարմիններին և հասարակությանն անհապաղ դադարեցնել ատելության քարոզը, վերացնել խտրականությունն ու բռնությունները՝ պայմանավորված մարդու սեռով, գենդերով, տարիքով, ազգությամբ կամ այլ տեսակի հատկանիշներով:

Դեկտեմբերի 11-ին ԻԿԻՀԿ ներկայացուցիչները մասնակցեցին ՄԱԿ ՄԻԽ ՀՊԴ նախահանդիպմանը, որտեղ ծրագրերի և քաղաքականության ղեկավար Ա. Գևորգյանը՝ ՀՀ-ն ներկայացնող քաղաքացիական հասարակության չորս այլ ներկայացուցիչների հետ, հանդես եկավ վեց րոպեանոց ելույթով: Ելույթին ներկա էին ՄԱԿ-ի անդամ պետությունները, որոնց ներկայացվեց Հայաստանում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության իրավիճակը, ելույթում անդրադարձ կատարվեց 2015թ.-ին՝ նախորդ ՀՊԴ շրջանում ՀՀ-ին արված ԼԳԲՏ առաջարկությունների և ՀՀ-ի ստանձնած պարտականությունների իրականացմանը: Նախորդ ՀՊԴ շրջանում ՀՀ-ին ՄԱԿ-ի անդամ պետությունները թվով տասներկու առաջարկներ էին արել՝ ապահովելու համար ՀՀ-ում ԼԳԲՏ անձանց խտրականությունից և ատելությունից պաշտպանված լինելու իրավունքը: Չնայած որ ՀՀ-ն ընդունել էր առաջարկությունների մեծամասնությունը, գործնականում չէր իրականացրել միջազգային հանրության կողմից իր առջև դրված և իր կողմից ընդունած և ոչ մի առաջարկություն: Այդ իսկ պատճառով ԻԿԻՀԿ-ն, ընդգծելով առաջարկությունների իրականացման կարևորությունը, ևս մեկ անգամ շեշտեց ԼԳԲՏ անձանց խտրականությունից և ատելությունից պաշտպանված լինելու իրավունքի ապահովման անհրաժեշտությունը: ԻԿԻՀԿ ելույթով ներկայացրած առաջարկություններն ունեին հինգ թեմատիկ ուղղություններ՝

Խտրականություն
Կրթության, զբաղվածության, առողջապահության, կացարանի և այլ ոլորտներում սեռական կողմնորոշվածության և գենդերային հիմքով խտրականությունն արգելող օրենքի մշակում և ընդունում, ներառյալ՝
հաստատութենականացված մարմնի ստեղծում՝ բողոքների ընդունման, քննարկման և լուծման համար,
ԼԳԲՏ անձանց նկատմամբ խարանն ու խտրականությունը նվազեցնող հանրային իրազեկվածության բարձրացմանը նպատակաուղղված ծրագրերի իրականացում,
ՄԻՊ-ի, ոստիկանության աշխատակիցների, քննիչների, բուժաշխատողների, դատավորների և կրթական անձնակազմի վերապատրաստում սեռականության և գենդերի վերաբերյալ:
Ատելության խոսք
ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության խոսքն ու ատելության քարոզը քրեականացնող օրենքի ընդունում, ներառյալ՝
ՄԻՊ-ի, ոստիկանության աշխատակիցների, քննիչների, դատավորների և կրթական անձնակազմի վերապատրաստում սեռականության և գենդերի վերաբերյալ,
ԼԳԲՏ անձանց նկատմամբ խարանն ու խտրականությունը նվազեցնող հանրային իրազեկվածության բարձրացմանը նպատակաուղղված ծրագրերի իրականացում:
Ատելության հիմքով բռնություններ
Սեռական կողմնորոշվածության և գենդերային ինքնության հիմքով ատելության հողի վրա կատարվող բռնությունների քրեականացում, ներառյալ՝
ՄԻՊ-ի, ոստիկանության աշխատակիցների, քննիչների, դատավորների վերապատրաստում սեռականության և գենդերի վերաբերյալ,
ԼԳԲՏ անձանց նկատմամբ խարանն ու խտրականությունը նվազեցնող հանրային իրազեկվածության բարձրացման նպատակաուղղված ծրագրերի իրականացում,
Ատելության հիմքով բռնությունների զոհ դարձած անձանց վերականգնողական ծրագրերի իրականացում:
Տրանսգենդեր անձանց առողջություն
Հեռացնել հիվանդությունների շարքից տրասսեքսուալությունն՝ ըստ ԱՀԿ հիվանդությունների միջազգային դասակարգման 11-րդ վերանայված տարբերակի, ներառյալ՝
ապահովել սեռափոխության և հորմոնաթերապիայի ոլորտում անհրաժեշտ կլինիկական ուղեցույցների առկայությունը,
ներառել սեռափոխության և հորմոնաթերապիայի հետ կապված ծախսերը ներդրվող առողջության համապարփակ ապահովագրության շրջանակներում,
ապահովել ՀՀ-ում տրանսգենդեր անձանց առողջության պահպանման ոլորտում վերապատրաստված ներզատաբանների և վիրաբույժների առկայությունը:
Գենդերի իրավական ճանաչում
Գենդերի իրավական ճանաչման և սեռի մասին փաստաթղթերում նշման փոփոխման համար պարտադիր սեռափոխման (ստերիլիզացման) օրենսդրական պահանջի վերացում, ներառյալ՝
սեռի մասին նշման փոփոխման իրավական գործընթացը դարձնել պարզ, հասկանալի և արագ ընթացակարգ,
ապահովել, որ փոփոխված օրենսդրությունը թույլ տա տրանսգենդեր անձանց կատարել սեռի մասին նշման իրավական փոփոխություն՝ ելնելով տրանսգենդեր անձի գենդերային ինքնորոշման սկզբունքից և իրավունքից:

Տեղեկացնենք նաև, որ բացի վերոնշյալ ելույթից, ԻԿԻՀԿ ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել և քննարկել ՀՀ-ում ԼԳԲՏ իրավունքների պաշտպանության իրավիճակը Ուրուգվայի, Շվեդիայի Թագավորության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության ՄԱԿ-ում մշտական ներկայացուցիչների հետ:
Հիշեցնենք, որ ՄԱԿ ՄԻԽ Համընդհանուր պարբերական դիտարկման Հայաստանի 3-րդ շրջանն իրականացվելու է 2020թ. հունվարին, իսկ այս տարի ապրիլին ԱԺ-ում՝ ազգային խորհրդակցության ընթացքում, ԻԿԻՀԿ նախագահ Լ. Մարտիրոսյանի ելույթից հետո, ԻԿԻՀԿ-ն՝ որպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ, օգտվելով իր իրավունքից, ՀՊԲ 3-րդ շրջանին ընդառաջ, այլընտրանքային զեկույց էր ներկայացրել ՄԱԿ ՄԻԽ-ին, որի մեջ ներառել էր ՀՀ-ում տրանսգենդեր անձանց իրավունքների պաշտպանության, նրանց նկատմամբ խտրականության ու բռնությունների իրավիճակը, ինչպես նաև ՀՀ-ում տրանսգենդեր իրավապաշտպանների անվտանգության ապահովման հարցը:
Հատկանշական է նաև այն, որ 2019թ. հոկտեմբերի 17-ին Նյու Յորքում, ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի նիստի ընթացքում կայացած ընտրությունների արդյունքում Հայաստանն ընտրվեց ՄԻԽ անդամ 2020-2022 թթ. ժամանակահատվածի համար: ՀՀ-ն ՄԻԽ-ին անդամակցում է առաջին անգամ: Իր անդամակցության շրջանակներում Հայաստանը ջանքեր է գործադրելու իր հանձնառություններն և առաջնայնություններն իրականացնելու ուղղությամբ, որոնցից մեկը հանդիսանում է կանանց և երիտասարդության իրավունքների պաշտպանությունը, խաղաղ և ներառական հասարակությունների կայացումը:
«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն հաջորդող տարում ամենայն աչալրջությամբ և ուշի ուշով հետևելու է ՀՀ-ի միջազգային հանրության առջև պարտավորությունների իրականացմանը և շարունակելու է տեղական ու միջազգային իրավապաշտպան մեխանիզմներն օգտագործել ի շահ ՀՀ-ում տրանսգենդեր անձանց հավասարության:

ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՆՈՒՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ և ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ

Նոյեմբերի 20-ից դեկտեմբերի 10-ը «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն Տեղական նախաձեռնությունների կանադական հիմնադրամի (CFLI) ֆինանսական աջակցությամբ իրականացնում էր միջոցառումների շարք «Հավասարության և բազմազանության փառատոն» խորագրի ներքո: Իր ռազմավարական նպատակներից ելնելով՝ ԻԿՀԿ-ն մշտապես ուշադրություն է դարձրել համայնքի տեսանելիության բարձրացմանն ու մշակութային միջոցառումների միջոցով համայնքի համախմբմանն ու հզորացմանը: Հենց այս նպատակով փառատոնի և շրջանակներում ԻԿՀԿ-ն կազմակերպել էր մշակութային մի շարք միջոցառումներ Երևանում և մարզերում տրանսգենդեր համայնքի և համախոհների ծանոթության, փորձի փոխանակման և միջհամայնքային հարաբերությունների ամրապնդման նպատակով:

Միջոցառման ընթացքում մասնակիցների համար նախատեսված էր էլեկտրոնային երաժշտություն, հյուրասիրություն և բարձր տրամադրություն:

ԻԿՀԿ թիմը միջոցառումների ընթացքում ոչ ֆորմալ քննարկումների միջոցով ներկայացրեց իրականացված միջոցառումները, գնահատեց գալիք միջոցառումների ակնկալիքները, ռիսկերն ու խոչընդոտները, գենդերային հավասարության համար անհրաժեշտ նախապայմաններն ու համայնքային ներգրավածությունը, ինչպես նաև այլ խմբերի հետ համագործակցության անհրաժեշտությունը: ԻԿՀԿ նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը, մասնակիցներն ու ակտիվիստները մասնավորապես կևևորեցին միջոցառումների ընթացքում համայնքի և համախոհների անվտանգությունը:

Մշակութային միջոցառումների ընթացքում ձևավորվեցին կամավորների խմբեր, ովքեր իրենց պատրաստակամությունը հայտնեցին մասնակցել հետագա միջոցառումների կազմակերպման աշխատանքներին:

ԻԿՀԿ թիմը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին միջոցառումներին ներկա գտնվելու, տրանսգենդեր համայնքին աջակցելու և ԼԳԲՏ իրավունքների պաշտպանության գործում կատարած ներդրումների համար:

ՀԱՐՁԱԿՈՒՄ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿՆՈՋ ՎՐԱ ՏԱՇԻՐ ՊԻՑՑԱՅՈՒՄ

2020թ. փետրվարի 4-ին, ժամը 18:00-ի սահմաններում, ք. Երևան Հյուսիսային պողոտայում գտնվող «Տաշիր պիցցա» սննդի կենտրոնում տեղի է ունեցել հարձակում 4 տրանսգենդեր անձանց վրա, որի հետևանքով տրանսգենդեր կին Ա.Ք.-ն ստացել է մարմնական վնասվածքներ, մասնավորապես՝ քթի երկկողմանի կոտրվածք:

Այդ օրը տրանսգենդեր անձինք ժամանելով «Տաշիր պիցցա» սննդի կենտրոն միանգամից նկատել էին իրենց սպասարկող աշխատակցի ոչ բարեհամբույր, անգամ խտրական վերաբերմունքը վերջիններիս նկատմամբ: Աշխատակիցը նրանց սպասարկում էր ծաղրական տոնով՝ կենտրոնացնելով մյուս հաճախորդների ուշադրությունը տրանսգենդեր կանանց վրա:

Տրանսգենդեր ակտիվիստ Լիլիթ Մարտիրոսյանը խնդրել է հաստատության մենեջերին, որ վերջինս կարգի հրավիրի էթիկայի նորմերից զուրկ մատուցողին, սակայն, անգամ դրանից հետո մատուցողը շարունակել է հեգնել ու վատ սպասարկել տրանսգենդեր կանանց, Ա.Ք.-ն անձամբ զգուշացրել է իրենց սպասարկող մատուցողին, որ նա իրեն կարգի հրավիրի, սակայն տրանսգենդեր կինն այդ զգուշացումից հետո արժանացել է վիրավորական վերաբերմունքի և հայհոյանքների տարափի, որից հետո մատուցողը հենց սրահում՝ մնացած հաճախորդների ներկայությամբ, հարվածներ է հասցրել Ա.Ք.-ին՝ կոտրելով նրա քիթը: Ինչից հետո սրահում գտնվող հաճախորդները խրախուսել են մատուցողի անօրինական գործողություններն ու նույնպես ցուցաբերել անհանդուրժող և խտրական վարքագիծ տրանսգենդեր կանանց նկատմամբ:

Լիլիթ Մարտիրոսյանի ահազանգով դեպքի վայր է ժամանել ոստիկանությունը և որոշում կայացրել բերման ենթարկել տրանսգենդեր կանանց և «Տաշիր պիցցա»-ի աշխատակցին կենտրոնի ոստիկանության բաժանմունք, որտեղ տուժած տրանսգենդեր կանայք ցուցմունք են տվել, որի հիման վրա սկսվել է նախաքննություն:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն խստորեն դատապարտում է ատելության և խտրականության հիմքով հանցագործությունները և խոստանում հետամուտ լինել դեպքերի հետագա զարգացմանը և գործերի արդար քննությանը: «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն նաև կոչ է անում «Տաշիր պիցցա» պիցաների ցանցին վերանայել իրենց աշխատակիցների ոչ պրոֆեսիոնալ վարքագիծը և հաճախորդների հանդեպ ունեցած վերաբերմունքը և խստորեն պատժել նմանօրինակ վարքագիծ ունեցող աշխատակիցներին:

Դեպքերի հետագա զարգացմանը ծանոթանալու համար շարունակեք հետևել մեզ սոցիալական ցանցերում և մեր պաշտոնական կայքում:

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԱԽԿԻՆ ԱՆԴԱՄԸ ԽՆԿԱՐԿԵԼ Է ԱԺ ԱՄԲԻՈՆԸ ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԻՑ ՀԵՏՈ

2020 թ. փետրվարի 25-ին՝ «Դատական օրենսգրքում և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին» լսումների ժամանակ, ԱԺ ամբիոնից ելույթ ունեցավ Երևանի ավագանու նախկին անդամ Սոնա Աղեկյանը:

Վերջինս շեղվելով օրակարգից և հավելյալ աղմուկ ու կեղծ օրակարգ ստեղծելու նպատակով գրպանից հանեց խնկամանն ու խունկ վառեց՝ ասելով. «Մոտավորապես մեկ տարի առաջ այս բարձրագույն ամբիոնից, որը իմ երկրի գերագույն ամբիոնն է, պատմություն էին կերտում, և որևէ մեկը, ով այստեղ նստած էր, չէր փորձում այդ պատմություն կերտողի ձեռքը բռնել և տրանսգենդեր հանդիսացող անձին ասել, որ պատմություն այստեղ չեն կերտում, այստեղ պատմություն կերտում են օրենքներով, որոնք լինում են միայն հայրենասիրական և ազգային ոգով ոգեշնչված: Ուստի, քանի որ իմ երկրում ազգային ժողովի ամբիոնը այս պահին պղծված է, ես հիմա այստեղ խնկարկում եմ անում և Ազգային ժողովի ամբիոնը մաքրում եմ բոլոր պղծություններից, որը կատարել է այստեղ տրանսգենդեր կոչվող անձը…» , չնայած այդ պահին լսումները նախագահող Վ. Վարդանյանի՝ խնկարկումը դադարեցնելու և հրդեհային անվտանգության կանոններին հետևելու հորդորին, Ս. Աղեկյանը միևնույնն է շարունակեց վառել խունկը, որից հետո անվտանգության աշխատակիցները ստիպված եղան դադարեցնել նրա ելույթն ու դուրս հրավիրել դահլիճից:

Ինչպես կարող ենք ենթադրել, չնայած նրան, որ Լիլիթ Մարտիրոսյանի ԱԺ ելույթից անցել է մոտավորապես մեկ տարի, սակայն կրքերը դեռևս չեն հանդարտվում և քաղաքական կարիերան ավարտած դեմքերը շարունակում են Լիլիթ Մարտիրոսյանի անունը շահարկել կեղծ օրակարգեր և անիմաստ իրարանցում ստեղծելու նպատակով:

Հիշեցնենք, որ անցյալ տարվա ապրիլի 5-ին ԱԺ-ում Լիլիթ Մարտիրոսյանի ելույթից հետո տարատեսակ կրոնական և ազգայնական խմբավորումներ և այդ խմբավորումների ներկայացուցիչներ բազմաթիվ սպառնալից ուղերձներ հնչեցրին Լիլիթ Մարտիրոսյանի հասցեին, կազմակերպեցին հավաքներ, քայլերթեր, փորձեցին խնկարեկել ԱԺ ամբիոնն ու նմանատիպ այլ վտանգավոր ակտիվություններ ցուցաբերեցին, ինչի պատճառով Լիլիթ Մարտիրոսյանը և իր ընտանիքն ու աշխատակազմը որոշ ժամանակով ստիպված եղան լքել երկիրն ու բազմիցս դիմել ոստիկանություն, սակայն այդ դիմումներից և ոչ մեկը մինչ օրս չի արժանացել արդարացի քննության և կամ պարզապես ընթացք չի ստացել:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ՏՐԱՆՍ ՃԱՄԲԱՐ» 4-Ը

2020թ. մարտի 4-6-ը տեղի ունեցավ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից կազմակերպվող 4-րդ «Տրանս ճամբարը», որը նախատեսված էր տրանս անձանց, նրանց ընտանիքի անդամների և տրանս անձանց իրավունքների համար պայքարող ակտիվիստների համար:

Դասընթացի նպատակն էր նպաստել տրանսգենդեր համայնքի կարողությունների զարգացմանը, քաղաքացիական, սոցիալ-մշակութային և հասարակական կյանքում նրանց ակտիվ ներգրավվածությանը, խթանել տրանս անձանց ընտանիքներում խարանի և խտրականության նվազեցումը:

Դասընթացի առաջին օրը բացման խոսքով հանդես եկավ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ հիմնադիր նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը, նա ողջունեց մասնակիցներին, իր երախտագիտությունը հայտնեց նրանց ներկա գտնվելու համար, հավատացրեց, որ դասընթացներից հետո մասնակիցները կհեռանան նոր գիտելիքներով, ակնկալիքներով և հեռանկարներով: Լիլիթ Մարտիրոսյանն առանձնակի շեշտեց ճամբարին առաջին անգամ մասնակցող ծնողների կարևորությունը և շնորհակալություն հայտնեց մասնակիցներին իրենց երեխաներին աջակցելու համար, նա հույս հայտնեց, որ հաջորդ ճամբարին ավելի շատ ծնողներ ներկա կգտնվեն, ովքեր պատրաստ կլինեն պայքարելու Հայաստանում իրենց տրանս և ԼԳԲԻՔ երեխաների իրավունքների լիիրավ կիրարկման համար:

Ողջույնի խոսքից հետո մասնակիցները բուռն քննարկում ծավալեցին սեռականության փորձագետի հետ, ում օգնությամբ յուրացրին «Սեռականություն» թեման, ծանոթացան սեռականության հիմնական հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ կենսաբանական սեռը, սեռական վարքագիծը, գենդերը, սեռական կողմնորոշվածությունը, ծանոթացան սեռական կողմնորոշվածության և գենդերի տեսակներին, հիմնական թեմային զուգահեռ մասնակիցները սովորեցին ինչպես ձեռք բերել քննադատական մտածելակերպ, որպեսզի ցանկացած հարցին կարողանան տալ առավելագույնս ծանրակշիռ պատասխան, որը հիմնված կլինի սեփական, հանրային և միջազգային փորձի վրա: Իսկ վերջում դասընթացավարը կազմակերպեց խաղ-վարժանք, որի ընթացքում մասնակիցները կարողացան բացահայտել իրենց ինքնության վերաբերյալ այնպիսի մանրամասներ, որոնց երբևէ ուշադրություն չէին դարձրել, խաղը նպաստեց նաև մասնակիցների միջև սառույցի հալմանը և միջհամայնքային մերձեցմանը:

Օրվա ավարտին մասնակիցները դասընթացավարների և Լիլիթ Մարտիրոսյանի հետ ամփոփեցին և գնահատեցին ստացած գիտելիքները և իրենց առաջարկությունները ներկայացրին կրթական ընթացքն էլ ավելի նպաստավոր դարձնելու համար:

Երկրորդ աշխատանքային օրը սկսվեց նախորդ օրվա ամփոփմամբ, մասնակիցներին հանձնարարված էր պատմել նախորդ օրվա թեմաներից ամենաազդեցիկ հատվածները, որը վերջիններս հաջողությամբ հաղթահարեցին:

Դասընթացի երկրորդ օրը նվիրված էր մարդու իրավունքներին և քաղաքացիական ներգրավվածությանը: Թեմայի շրջանակներում մասնակիցները զրուցեցին Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից, քննարկեցին ինչպես լինել ակտիվ և պատասխանատու քաղաքացի և նպաստել հավասար իրավունքների տարածմանը: Թեման բուռն քննարկումների պատճառ դարձավ. մասնակիցներին հուզող հարցերն արժանացան համապարփակ պատասխանի:

Օրվա երկրորդ կեսին մասնակիցները տեղեկացան, թե ինչպիսի անվճար կրթական հնարավորություններ կան ՀՀ-ում, ինչպես օգտվել այդ հնարավորություններից և ինչպես կազմել գրագետ ինքնակենսագրական ու մոտիվացիոն նամակ: Մասնակիցները խաղացին դերային խաղ, որի ընթացքում նրանք ԻԿՀԿ թիմին ներկայացրին իրենց ինքնակենսագրականներն ու մոտիվացիոն նամակները և հարցազրույցի հրավիրվեցին մտացածին աշխատանքի ընդունվելու համար: Յուրաքանչյուր մասնակցի հարցազրույցից հետո դասընթացավարները նշեցին, թե տվյալ մասնակիցը ինչ սխալներ է թույլ տվել ինքնակենսագրականը կազմելիս և հարցազրույցի ընթացքում, որպեսզի աշխատանքի ընդունվելիս նրանք խուսափեն այդ սխալները կրկնելուց:

Երկրորդ աշխատանքային օրը թերևս երեք աշխատանքային օրերից ամենաէմոցիոնալն էր. խոսում էին տրանս և ԼԳԲԻՔ անձանց ծնողները: Այս քննարկման ընթացքում ծնողները պատմեցին իրենց տրանս և ԼԳԲԻՔ երեխաների պատմությունը, թե ինչպես են նրանք իմացել այդ մասին, ինչպես են արձագանքել և այժմ ինչպիսի հարաբերություններ ունեն իրենց երեխաների հետ: Սա մի հարթակ էր, որի ընթացքում ծնողներն ու երեխաները կարողացան արտահայտել սրտում կարծրացած հարցերը, իրենց զգացմունքներն ու ապրումները, յուրաքանչյուր խոսքի ամփոփումից հետո ծնողները մեծ ոգևորությամբ գրկախառնվում էին իրենց երեխաների հետ և միմյանց գովասանքի խոսքեր ասում:

Երկրորդ օրը Լիլիթ Մարտիրոսյանը նախատեսել էր պանել-քննարկում, որի ընթացքում մասնակիցներն իրենց հուզող հարցերն ուղղեցին հորմոնաթերապիայի, սեռափոխության և սեքս աշխատանքի իրավական կարգավորումների վերաբերյալ:

Երրորդ օրը նույնպես սկսվեց նախորդ օրվա ամփոփմամբ, այնուհետև նախատեսված էր «Տրանս ակտիվիզմի վիճակը Հայաստանում» թեմայով քննարկում, որը վարում էր տրանսգենդեր ակտիվիստ Լիլիթ Մարտիրոսյանը: Վերջինս ներկայացրեց իր և ԻԿՀԿ թիմում աշխատող այլ ԼԳԲՏ ակտիվիստների անցած ուղղին, հետագա քայլերը և խրախուսեց նոր ակտիվիստների հավաքագրումն ու ներգրավումը կարողությունների զարգացման և իրավունքների պաշտպանության գործընթացում:

Դասընթացի ավարտին Լիլիթ Մարտիրոսյանը մեկ անգամ ևս շնորհակալություն հայտնեց դասընթացը ֆինանսավորող կազմակերպությանը, մասնակիցներին, դասընթացավարներին և ԻԿՀԿ ողջ անձնակազմին՝ մասնակիցներին հանձնելով վկայականներ:

«Ամեն ինչ կազմակերպված էր իդեալական, միայն կցանկանայի, որպեսզի նմանօրինակ հանդիպումներն ավելի հաճախակի բնույթ կրեն» – ԼԳԲՏ ակտիվիստ:

«Թե դասընթացի թեմաները, թե դասընթացավարների հմտությունները գերազանց էին, չեմ կարող չնշել նաև հյուրանոցի բարձր սպասարկումը, պարզապես շնորհակալ եմ»: –Տրանսգենդեր ակտիվիստ:

«Սա պարզապես անփոխարինելի հարթակ էր, որտեղ ես ճանաչեցի իմ երեխային նորովի, հասկացա նրա խնդիրները, որոնց գոյության մասին մինչ այս չէի էլ իմացել, հիմա գիտեմ, որ պայքարելու եմ իմ երեխայի և նրա նման բազմաթիվ այլ երեխաների իրավունքների համար մինչև վերջ» – Տրանսգենդեր երեխայի ծնող:

«Ես ցանկանում եմ, որպեսզի նման հավաքներն ավելի հաճախ կազմակերպվեն, քանի որ ինքս չլինելով ԼԳԲՏ համայնքի անդամ, հասկանում եմ, թե որքան կարևոր և ուսուցողական են այսպիսի հավաքները հենց համախոհների համար» – Տրանս համախոհ:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը իր խորին շնորհակալությունն է հայտնում բոլոր մասնակիցներին և հույս հայտնում մոտ ապագայում տեսնել նրանց տրանս անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ակտիվիստների առաջնագծում:

ԹԱՐՄԱՑՈՒՄ ՆԱՐԵԿ ՄԱԼՅԱՆԻ ԴԵՄ ԳՈՐԾԻ ԵՐԱԲԵՐՅԱԼ

2019թ. հոկտեմբերի 10-ին Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը ՀՀ գլխավոր դատախազին էր ներկայացրել հանցագործության մասին հաղորդում Նարեկ Մալյանի՝ «ՁԻԱՀ-ով հիվանդ Կուբայի քաղաքացիների» հրապարակման վերաբերյալ, որը ուղարկվել էր ոստիկանության Երևանի քաղաքի վարչություն:

Երևան քաղաքի վարչությունը հաղորդումը հասցեագրել էր ոստիկանության կենտրոնական բաժին, որտեղ գործը երկար ժամանակ ոչ մի ընթացք չէր ստանում, այնուհետև 2020թ. փետրվարի 10-ին ոստիկանության կենտրոնական բաժնից ստացվել է գրություն, ըստ որի հաղորդումը կցվել էր նախկինում մեկ այլ կազմակերպության կողմից նույնաբովանդակ ինչ-որ այլ հայտարարության հետ կապված նյութերին:

Այսպիսով 2020թ. փետրվարի 17-ին Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ-ն որոշեց բողոքարկել ոստիկանության կենտրոնական բաժնի անգործությունը ՀՀ գլխավոր դատախազություն, վերջինս բավարարել է բողոքը և հանձնարարել է ոստիկանության կենտրոնական բաժնին նախապատրաստել նյութեր և լուծել գործի ընթացքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով: Ըստ այդմ, ոստիկանության կենտրոնական բաժինը պետք է որոշում կայացնի կամ քրեական գործ հարուցելու մասին, կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին կամ հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին:

Հիշեցնենք որ 2019թ. հոկտեմբերի 14-ին, ժամը 15:57-ին Aysor.am կայքում հրապարակված՝ «Կուբայից ժամանած 14 տրանսգենդերները ՁԻԱՀ վարակակիր են, պնդում է Մալյանը. Ի՞նչ է ասում Միգրացիոն ծառայությունը» հոդվածից տեղեկացել էինք, որ «ՎԵՏՕ» շարժման նախաձեռնող Նարեկ Մալյանը վստահեցնում է՝ Հայաստանում գտնվող տրանսգենդերների մասին իր ինֆորմացիան պաշտոնական է:

Մալյանը Facebook-ի իր էջում գրել էր, որ «Կուբայից ժամանած թվով 14 հատ տրանսգենդերները ՁԻԱՀ վարակակիրներ են: Սա պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկություն է, կարող եք տարածել: Ընդհանուր առմամբ 16 հատ են, որից 14-ը ՁԻԱՀ վարակակիր: Ընդ որում նրանցից մեկը աշխատում էր հացի փռում»:

Այս և այլ գործերի մանրամասներին ծանոթանալու համար հետևեք մեր կայքի և ֆեյսբուքյան էջի թարմացումներին:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆԸ

Սույն թվականի հոկտեմբերի 14-ին, ժամը 15:57-ին Aysor.am կայքում հրապարակված՝ «Կուբայից ժամանած 14 տրանսգենդերները ՁԻԱՀ վարակակիր են, պնդում է Մալյանը. Ի՞նչ է ասում Միգրացիոն ծառայությունը» հոդվածից տեղեկանում ենք, որ «ՎԵՏՕ» շարժման նախաձեռնող Նարեկ Մալյանը վստահեցնում է՝ Հայաստանում գտնվող տրանսգենդերների մասին իր ինֆորմացիան պաշտոնական է:
Նարեկ Մալյանը Facebook-ի իր էջում գրել էր, որ «Կուբայից ժամանած թվով 14 հատ տրանսգենդերները ՁԻԱՀ վարակակիրներ են: Սա պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկություն է, կարող եք տարածել: Ընդհանուր առմամբ 16 հատ են, որից 14-ը ՁԻԱՀ վարակակիր: Ընդ որում նրանցից մեկը աշխատում էր հացի փռում»:
Պարոն Մալյանի սոցիալական կայքէջի ուսումնասիրության արդյունքում «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն եզրահանգեց, որ վերջինիս կողմից արված արտահայտությունները ՀՀ քրեական օրենսգրքի մի քանի հոդվածներով պարունակում են հանցակազմ, մասնավորապես՝
պնդելով, որ ստացված տեղեկությունները պաշտոնական աղբյուրներից են, կարելի է եզրակացնել, որ եթե Կուբայից ժամանած թվով 14 տրանսգենդեր անձինք ՄԻԱՎ վարակակիրներ են, ապա նշյալ տեղեկատվությունը ձեռք է բերվել կա՛մ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց միջոցով, կա՛մ ապօրինի այլ ճանապարհով:
ՀՀ քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածի համաձայն՝
առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կողմից անձի հիվանդության կամ բժշկական ստուգման արդյունքների մասին տեղեկություններ հրապարակելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:
ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածի համաձայն՝
մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելը կամ հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ լրատվության միջոցներով այդպիսի տեղեկություններ տարածելը կամ հավաքելը կամ պահելը, եթե դրանք նախատեսված չեն օրենքով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:
Պարոն Մալյանը, առարկայացնելով ապաստան հայցող տրանսգենդեր անձանց, նրանց մասին խոսելիս օգտագործել է «հատ» բառը, ինչի կապակցությամբ կարելի է եզրակացնել, որ պարոն Մալյանը նվաստացուցիչ մոտեցում ունի մարդկանց որոշակի խմբերի նկատմամբ՝ պայմանավորված նրանց սեռով, ազգային կամ էթնիկ ծագմամբ, ենթադրյալ գենդերային ինքնությամբ, ենթադրյալ ՄԻԱՎ կարգավիճակով, կամ ենթադրյալ սեքս աշխատող լինելուց կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:
Նկատի ունենալով ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածը՝
Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով:
Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են հրապարակայնորեն կամ լրատվության միջոցներ օգտագործելով, պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

HUMAN RIGHTS DEFENDER NGO

Ընդունելով, ՀՀ Սահմանադրության հոդված 3-ը՝
Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:
Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:
Փաստելով, որ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի՝ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, որը վնաս է պատճառել մարդու և քաղաքացու իրավունքներին ու օրինական շահերին, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
Ելնելով ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածով սահմանված քրեական գործ հարուցելու առիթներից՝ հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին.
2) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները.
«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն, ներկայացնելով վերոնշյալ փաստերը, հանցագործության մասին հանրային հաղորդում է ներկայացնում ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով ստուգել Նարեկ Մալյանի հրապարկումը՝ ենթադրյալ հանցակազմերի կապակցությամբ:
Հաղորդման կրկնօրինակն «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն ուղարկում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ՝ վերահսկելու սույն հաղորդման հիման վրա քրեական գործ հարուցելու գործընթացի անաչառությունը, օրինականությունը, անկողմնակալությունը և բացառելու հնարավոր խտրականությունն ապաստան հայցող տրանսգենդեր անձանց նկատմամբ:
To be informed more about this and other cases, follow the updates of our website and Facebook page.

RIGHT SIDE
HUMAN RIGHTS DEFENDER NGO

ՏՐԱՆՍ ԿՆՈՋ ՓԱՍՏԱԲԱՆԸ՝ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2019թ.-ի ապրիլի 5-ին ՀՀ Ազգային Ժողովում տրանսգենդեր կնոջ ելույթից հետո հանրության արձագանքը երկար սպասեցնել չտվեց, ինչպես կանխատեսված էր այն մեծամասամբ բացասական բնույթ էր կրում, սակայն եղան դեպքեր, երբ հասարակության որոշ ներկայացուցիչների հանդգնությունն անցավ բոլոր կանխատեսելի և անկանխատեսելի սահմանները:

«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը մի քանի անգամ ստիպված եղավ դիմելու իրավապահ մարմիններին սպառնալիքներից, մահվան կոչերից, հետապնդումներից խուսափելու և անձնական տեղեկատվությանն հրապակայնությունը կանխելու նպատակով: Այս ու այլ իրավական միջամտությունների վերաբերյալ և դրանց ժամանակ ծագած խնդիրների մասին խոսեցինք փաստաբան Արթուր Մարգարյանի հետ, ով հանդիսանում է Լիլիթ Մարտիրոսյանի ներկայացուցիչը մի շարք դատական գործերի շրջանակներում:

Այս կապակցությամբ մենք մի քանի հարց ուղղեցինք այս գործերում ներգրավված փաստաբան Արթուր Մարգարյանին:

Հարցազրույց

Պարոն Մարգարյան կասե՞ք՝ Խորհրդարանում Լիլիթ Մարտիրոսյանի ելույթից հետո սպառնալիքների հիմքով եղե՞լ է արդյոք հաղորդում ոստիկանություն և եթե այո, ապա քանի՞ այդպիսի հաղորդում է ներկայացվել և ինչ ընթացքում են դրանք այս պահին:

-Այո, Լիլիթ Մարտիրոսյանի ԱԺ ելույթից հետո միանշանակ հարկ կար մտահոգվելու նրա ֆիզիկական և հոգեբանական առողջության և անվտանգության համար և հենց այդ պատճառով Լիլիթ Մարտիրոսյանը ոստիկանություն հաղորդում ներկայցրեց սպառնալիքների կապակցությամբ: Ոստիկանությունը մերժեց քրեական գործ հարուցել, նշելով, որ սպառնալիքներն իրական բնույթ չեն կրել, այլ արտահայտել են այդ մարդկանց ազատ կարծիքն ու վրդովմունքը: Ներկայումս մեր կողմից դատարանում վիճարկվում է ոստիկանության կողմից քրեական գործ հարուցելու մերժելու որոշումը:

Նույն քրեական գործի շրջանակներում, երբ սուպերմարկետի առաքիչը հանրայնացրել էր Լիլիթ Մարտիրոսյանի բնակության հասցեն, քննչական մարմինն ու ոստիկանությունը որոշեցին, որ դա բաց տեղեկատվություն է, որը հեշտությամբ կարող է հասանելի լինել ցանկացած քաղաքացու, ով կայցելի elections.am կայքը և կորոնի Լիլիթ Մարտիրոսյանի հասցեն, սակայն նշված կայքում տեղադրված է Լիլիթ Մարտիրոսյանի հաշվառման հասցեն, իսկ փաստացի բնակության հասցեի մասին ոչ մի տեղեկություն չի տեղադրվել ոչ մի տեղ, ինչը նշանակում է, որ այն չէր կարող դիտարկվել որպես՝ հանրամատչելի տեղեկատվություն:

Կա մեկ այլ գործ, որը գտնվում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում, այն վիրավորանք հասցնելու վերաբերյալ է, երբ կրկին ԱԺ ելույթից հետո Լիլիթ Մարտիրոսյանի վերաբերյալ irates.am կայքը նրան անվան էլ էր «այլասերված», այդ հիմքով քաղաքացիական գործ է հարուցվել հրապարակային ներողություն խնդրելու և փոխհատուցում կատարելու պահանջով:

Պարոն Մարգարյան, իսկ ի՞նչ խոչընդոտների եք բախվել և բախվում ՏՐԱՆՍ ԼԳԲ անձանց առնչվող գործերի շրջանակներում:

– Հիմնական խոչընդոտները ծագում են ոստիկանությունում և քննչական մարմինների հետ, երբ վերջիններս հրաժարվում են գործին ընթացք տալ, կամ ձգձգում են այդ գործընթացը անգամ բավարար ապացույցների և ակնհայտ հանցակազմի առկայության դեպքում, միայն տուժողի ենթադրյալ ԼԳԲՏ լինելու փաստը հաշվի առնելով:

Իսկ դատարանի հետ որևէ խոչընդոտներ առաջացե՞լ են նմանօրինակ գործերի դատավարության ընթացքում:

– Ոչ: Դատարանում սովորաբար գործը հայտնվելուց հետո իր բնականոն հունով շարժվում է առաջ, հիմնական խոչընդոտները ծագում են ոստիկանության և քննչական մարմնի հետ հետաքննության և նախաքննության փուլում:

Ինչպես կարող ենք եզրակացնել փաստաբանի հետ զրույցից՝ չնայած նրան, որ Հայաստանում մի շարք հասարակական կազմակերպություններ և պետական կառույցներ պայքարում են հանուն Հայաստանում ժողովրդավար հասարակության և համընդհանուր հավասարության, այնուամենայնիվ պատկան մարմիններն ու ուժային կառույցները բավական քաղաքական կամք չեն ցուցաբերում ԼԳԲՏ անձանց առնչվող հարցերին ու խնդիրներին տալ պատշաճ լուծումներ և հետևել ժողովրդավարության գաղափարախոսությանը:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

RightSideNGO.com

rightsidengo@gmail.com

RightSideNGO

RightSideNGO

RightSideNGO

+374 - 11 - 880 - 770

©Copyright All Rights Reserved For Right Side Ngo.